

## Մ Ա Ս II

### ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

## ՄԱՍ II - Ա

Մակրոտնտեսական կանխատեսումներ և վերլուծություն

### 3.1 Ներածություն

Տարեկան բյուջետային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև 2010 թվականի մակրոտնտեսական հեռանկարները:

#### ***Տնտեսական կանխատեսումների նպատակը***

Հայաստանի տնտեսության իրավիճակի կանխատեսումները կարևոր են մի քանի պատճառներով: Նախ՝ տնտեսական աճ ապահովող արդյունավետ տնտեսության առկայությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եկամուտների ավելացումը ինքնին շատ կարևոր նպատակ են Հայաստանի Հանրապետության կառավարության համար: Այդ նպատակները նաև կառավարության Կայուն Չարգացման Ծրագրի հիմնական բաղադրիչներն են: Մակրոտնտեսական կանխատեսումները ոչ միայն տեղեկատվություն են տալիս, թե ինչ աստիճանով են վերը նշված նպատակները իրագործվելու, այլ նաև ապահովում են ընդհանուր միջավայրի վերաբերյալ պատկերացումներ, ինչը կարևոր է կառավարության ռազմավարության և քաղաքականության այլ ասպեկտների ձևավորման համար: Այլ կերպ ասած մակրոտնտեսական կանխատեսումները հիմք են տալիս պատկերացում ունենալ այն իրական միջավայրի մասին, որի պայմաններում գործելու է կառավարությունը:

Տնտեսական կանխատեսումների իրականացման երկրորդ կարևոր հիմնավորումն այն է, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին կառավարության համար ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

### ***Տնտեսության նկարագրություն***

Տնտեսությունը կարելի է նկարագրել հետևյալ վեց հիմնական ասպեկտներով.

- Համախառն առաջարկ (չափվում է, տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների իրական աճերով, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճով),
- Համախառն պահանջարկ (չափվում է, պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ),
- Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլյատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը և գնաճ, որը չափվում է սպառողական գների (ներառյալ սպառողական ներմուծված ապրանքների գները) ինդեքսով (ՍԳԻ)),
- Ֆինանսական համակարգի խորություն (չափվում է հետևյալ փոփոխականներով՝ Փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ, ցույց է տալիս թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),
- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով),
- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի և եկամուտների ծավալով, պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ):

Աղյուսակ 3.1-ում ներկայացված է տնտեսության ներկա իրավիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ վերը նշված վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների: ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 3.1-ում նշված ցուցանիշերը և տնտեսության զարգացման հեռանկարները:

*Աղյուսակ 3.1 ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ*

Չափորոշիչ	2006	2007	2008	2009 7 ամիս	2009	2010
	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Կանխատեսում	Պլանավորած
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	13.2	13.7	6.8	-18.5	-15.6	1.2
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ %)	35.9	38.6	40.8	26.8*	31.7	29.2
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ %)	82.3	81.8	82.3	94.5*	94.3	95.1
ՀՆԱ դեֆլյատոր	104.6	104.1	108.4	100.8	101.2	102.0
Գնաձեռնարկ	2.9	4.4	9.0	2.7	3.0	2.8
Բանկային համակարգի ներգրավվածություն (փողի զանգված/ՀՆԱ %)	18.3	22	19.4	-	25.8	27.7
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ (%)	-1.8	-6.4	-11.6	-13.4*	-13.2	-12.1
Պակասուրդ/ՀՆԱ (%)	-0.6	-0.7	-0.7	-	-6.8	-5.69

**3.2 Համախառն առաջարկ**

Ինչպես արդեն նշել ենք, երկրում համախառն առաջարկն իրական արտահայտությամբ չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով, որի փոփոխությունն էլ նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի<sup>1</sup> միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագա ակնկալվող զարգացումները:

***Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները***

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունը բնութագրվել է տնտեսական աճի բարձր ցուցանիշներով, մասնավորապես՝ 2006-2008թթ միջինում գրանցվել է 11.2 տոկոս ՀՆԱ իրական աճ: 2006-2008թթ տնտեսական աճին հիմնականում նպաստել են շինարարությունը՝ միջինում 4.5 և ծառայությունները՝ միջինում 3.9 տոկոսային կետերով:

2008 թվականին, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով, արդեն իսկ չորրորդ եռամսյակից նկատելի եղավ տնտեսական աճի տեմպերի կտրուկ նվազումը, իսկ տարվա արդյունքով գրանցվեց 6.8 տոկոս ՀՆԱ իրական աճ, որը վերը նշված միջին ցուցանիշից բավականին ցածր է:

2009 թվականի հունվար-հուլիս ամիսներին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) իրական արտահայտությամբ, շարունակելով նախորդ տարվա չորրորդ եռամսյակին արձանագրած

\* Ներկայացված ցուցանիշների փաստացի արդյունքները հրապարակված չեն և ներկայացվում են ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականները:

<sup>1</sup> ՀՆԱ-ի իրական աճ ասելով հասկանում ենք տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի ծավալային աճը՝ առանց գնային փոփոխության:

միտումները, նվազել է 18.5 տոկոսով, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ՀՀ տնտեսությունում արձանագրվել էր 10.7 տոկոս տնտեսական աճ:

2009 թվականի առաջին յոթ ամիսների ընթացքում ծառայությունների ոլորտը աճ արձանագրած միակ ոլորտն է եղել է<sup>2</sup>: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 0.3 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 0.8 տոկոս: Տնտեսության մյուս բոլոր ճյուղերը, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված նվազել են՝ շինարարությունը 2009 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ նվազել է 54.4 տոկոսով, որի հաշվին տնտեսական աճն ընկել է 14.1 տոկոսային կետով, արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) նվազել է 11.6 տոկոսով և 18.5 տոկոս տնտեսական անկմանը նպաստել 1.8 տոկոսային կետով, իսկ գյուղատնտեսությունը նվազել է 2.1 տոկոսով և անկմանը նպաստել 0.2 տոկոսային կետով:


**Կանխատեսում:** Մինչև տարեվերջ ակնկալվում է 15.6 տոկոս տնտեսական անկում, իսկ 2010թ համար կանխատեսվել է աճ 1.2 տոկոսի չափով: Դրա համար հիմք է հանդիսացել միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված համաշխարհային տնտեսության վերականգնման վերաբերյալ կանխատեսումները: Արդյունքում, ակնկալվում է համաշխարհային պահանջարկի մեծացում, մետաղների միջազգային գների շարունակվող աճ և արտերկից եկող դրամական փոխանցումների աճ:

Աղյուսակ 3.2.1. Իրական ծավալի ինդեքսները 2006-2010թթ

	2006	2007	2008	2009 հունվար- հուլիս	2009	2010
Արդյունաբերություն	97.5	102.8	102.4	88.4	92.6	103.1
Գյուղատնտեսություն	100.5	110.4	101.4	97.9	99.0	102.0
Շինարարություն	137.7	118.2	107.2	45.6	53.4	96.1
Ծառայություններ	116.0	112.5	108.5	100.8*	101.0	102.0
Արտադրանքի հարկեր (համաձ սուբսիդիաներ)	114.9	135.9	116.7	78.3	80.0	102.0
<b>Ընդամենը ՀՆԱ</b>	<b>113.2</b>	<b>113.7</b>	<b>106.8</b>	<b>81.5</b>	<b>84.4</b>	<b>101.2</b>

<sup>2</sup> Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին  
\* առանց ֆինանսական միջնորդության անուղղակի չափվող ծառայությունների

*Չժայատկեր 3.2.1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված իրական աճի նպաստման չափերը:*



### **3.2.1 Արդյունաբերություն**

Աղյուսակ 3.2.1-ից կարելի է նկատել, որ 2006-2008թթ արդյունաբերության ճյուղի իրական աճի ցուցանիշը ամենացածրն է եղել և միջին հաշվով գրանցվել է 0.9 տոկոս աճ, ինչը բացատրվում է նաև այդ տարիներին արդյունաբերության որոշ ճյուղերի համար (բացառությամբ մետալուրգիայի) անբարենպաստ գնային դաշտի ձևավորմամբ՝ ի դեմս արժևորվող իրական փոխարժեքի: 2009 թվականի հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է համախառն արդյունաբերական արտադրանքի ծավալների մոտ 12 տոկոս նվազում: Բարձր նվազման ցուցանիշներ գրանցվել են մանածագործական արտադրության, ոսկերչական արտադրատեսակների արտադրության, քիմիական արդյունաբերության, բնափայտի մշակման և փայտե արտադրատեսակների արտադրության ենթաճյուղերում համապատասխանաբար 59.8, 54.7, 52.9 և 50.6 տոկոս անկումներ: Իսկ ամենաշատը արդյունաբերության համախառն թողարկման անկմանը նպաստել են էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունը և բաշխումը՝ 2.0, սննդամթերքի ներառյալ խմիչքների արտադրությունը՝ 2.0, ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը՝ 1.1, քիմիական արդյունաբերությունը՝ 1.2, այլ ոչ մետաղական հանքատեսակների արտադրությունը՝ 1.9, և հանքագործական արդյունաբերությունը՝ 1.1 տոկոսային կետերով:

**Կանխատեսում:** Արդյունաբերությունում ակնկալվում է, որ մինչև տարեվերջ անկումը փոքր ինչ կնվազի՝ կապված փոխարժեքի արժեզրկման արդյունքում հայրենական ձեռնարկությունների գնային մրցունակության ձեռքբերման, և կկազմի 7.4 տոկոս: Իսկ 2010թ աճի տեմպերը կվերականգնվեն և կգրանցվի աճ շուրջ 3.1 տոկոսի չափով, որը հիմնականում պայմանավորված կլինի հատկապես հանքարդյունաբերության ոլորտում արտահանման խթանման շարժառիթներով:

### **3.2.2 Գյուղատնտեսություն**

2006-2008թթ գյուղատնտեսության իրական աճը կազմել է միջինում 4.1 տոկոս: Սակայն 2009 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 2.1 տոկոս նվազում, որը անկումը պայմանավորված է անասնաբուծության համախառն արտադրանքի 4 տոկոս անկմամբ և բուսաբուծության ճյուղի 0.5 տոկոս աճով:

**Կանխատեսում:** Մինչև տարեվերջ ակնկալվում է գյուղատնտեսության իրական անկման ավելի փոքր մակարդակ՝ շուրջ 1 տոկոս, իսկ 2010թ կգրանցվի աճ 2 տոկոսի չափով:

### **3.2.3 Շինարարություն:**

Շինարարության ճյուղը 2006-2008 թթ. ՀՆԱ նկատմամբ ունեցել է առաջանցիկ աճի տեմպեր և միջին հաշվով ապահովել շուրջ 21 տոկոս իրական աճ: Այսինքն, հանդիսացել է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը: Սակայն, արդեն 2009թ. յոթ ամիսներին ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները նախորդ տարվա համեմատ նվազել են 55.5 տոկոսով: Ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված կապիտալ շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 44.5 տոկոս և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 71.3 տոկոսով, իսկ կազմակերպությունների միջոցները կազմել են 39.3 տոկոս և դրանց հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 18.2 տոկոսով:

Շինարարությունում հիմնական միջոցներն ըստ ճյուղերի շարունակում են ուղղվել անշարժ գույքի հետ կապված գործառնություններին, որին բաժին է ընկել կատարված շինարարության ծավալների 39.6 տոկոսը: Հաջորդ մեծ մասնաբաժին ունեցող ճյուղերն են կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցումը (19.3), տրանսպորտը և կապը (12.9), էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխումը (8.2), ինչպես նաև առևտուրը (6.2):

**Կանխատեսում:** 2009թ վերջին շինարարության ճյուղի անկումը մեր գնահատումներով կկազմի 46.6 տոկոս, որն իր վրա կկրի հիմնականում բնակարանային շինարարությունը: Չնայած կառավարության կողմից այս ոլորտում շարունակական ծրագրերի իրականացմանը 2010թ ևս կունենանք անկում 3.9 տոկոսի չափով, որը հիմնականում պայմանավորված կլինի արտերկրից ֆինանսավորվող մասնավոր ներդրումների ցածր մակարդակով:

### **3.2.4 Ծառայություններ և առևտուր**


2006-2008թթ ծառայությունների ոլորտի միջին իրական աճը կազմել է 12.3 տոկոս և ունեցել է ՀՆԱ-ի աճի տեմպը գերազանցող աճ: Սակայն, 2009 թվականի հունվար-հուլիս ամիսներին մատուցված ծառայությունների ծավալը 2008 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ համադրելի գներով նվազել է 0.5 տոկոսով: Մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում կապի (22.6 տոկոս), տրանսպորտի (20.2 տոկոս) և

ֆինանսական գործունեության (19.7 տոկոս) ծառայությունները, ինչպես նաև առողջապահության (6.8 տոկոս), կրթության (5.5 տոկոս) և հյուրանոցային, ռեստորանային (4.6 տոկոս) ծառայությունները:

2009 թվականի հունվար-հուլիս ամսերին առևտրի շրջանառությունը 2008 թվականի համապատասխան ժամանակահատվածի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, նվազել է 5.7 տոկոսով, որտեղ մանրածախ առևտուրը աճել է 0.1 տոկոսով, իսկ մեծածախ առևտուրը և ավտոմեքենաների առևտուրը՝ նվազել են համապատասխանաբար 7.8 և 48.7 տոկոսով:

**Կանխատեսում:** 2009թ մինչև տարեվերջ կանխատեսում ենք, որ աճ ապահովող միակ ճյուղը կլինի (շուրջ 1 տոկոս) ծառայությունները, իսկ 2010թ տնտեսական աշխուժացմանը զուգընթաց ճյուղի աճը կկազմի 2 տոկոս:

*Գծապատկեր 3.2.2 Ոլորտների տեսակարար կշիռը 2010 թվականի ՀՆԱ-ի կանխատեսումներում*



**3.3 Աշխատաշուկա:** 2006-2008թթ գործազրկության մակարդակը տնտեսական բարձր աճով պայմանավորված անկման միտում է դրսևորել: Սակայն, 2009 թվականի հունվար-հուլիսին գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 0.5 տոկոսային կետով և կազմել 6.8% (79.9 հազ. մարդ), որը պայմանավորված է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով համախառն պահանջարկի, և դրա արդյունքում նաև աշխատուժի նկատմամբ պահանջարկի զգալի նվազմամբ:

2009 թվականի հունվար-հուլիսին միջին ամսական անվանական աշխատավարձը 2008 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 12.1%-ով, ընդ որում՝ բյուջետային հատվածի աշխատավարձն աճել է 18,1%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է՝ 82172 դրամ և 122324 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 98585 դրամ:

2009 թվականի հունվար-հուլիսին իրական աշխատավարձի աճը 2008 թվականի հունվար-հուլիսի համեմատ կազմել է 9,2%: Աշխատանքի արտադրողականությունն իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 12.5%-ով, որը պայ-

մանավորված է ՀՆԱ-ի աճի տեմպերի (հիմնական գներով 18.0%) համեմատ զբաղվածության համեմատաբար քիչ նվազմամբ (1.4%):

**Կանխատեսում:** 2010թ տնտեսական ակտիվության աճին զուգընթաց կանխատեսում ենք գործազրկության մակարդակի աննշան նվազում 2009 թվականի համեմատ: Յուրացմիչները ներկայացված են 3.2.1 աղյուսակում:

*Աղյուսակ 3.2.1. Գործազրկության մակարդակի դինամիկան 2006-2010թթ*

	2006	2007	2008	2009թ հունվար- հուլիս	2009	2010
Գործազրկության մակարդակ	7.5	7.0	6.3	6.8	6.7	6.3

### 3.3 Համախառն պահանջարկ

Համախառն պահանջարկը հիմնականում պատկերացում է տալիս տնտեսությունում ստեղծված եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս, թե ձևավորված եկամուտներն ուղղակի սպառման են ուղղվելու, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման բաղադրիչներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից մեր ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին:

#### ***Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները***

2006-2008թ ընթացքում սպառումը միջին հաշվով աճել է 10.1 տոկոսով, իսկ իրական ՀՆԱ-ն՝ 11.2 տոկոսով: Ընդ որում, պետական սպառումը միջին հաշվով աճել է 13.5 տոկոսով, իսկ մասնավոր սպառումը՝ 9.6 տոկոսով: Արդեն, 2009 թվականի հունվար-հուլիսին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ, ըստ գնահատականների, նվազել է շուրջ 5.5 տոկոսի շրջակայքում<sup>2</sup>: Նշված անկումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա չորրորդ եռամսյակից նկատվող տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ, որի հետևանքով բնակչության իրական եկամուտների աճի տեմպերի զգալի նվազում է արձանագրվել: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2009 թվականի հունվար-հուլիսին ըստ գնահատականների կազմել են 12.5 և 87.5 տոկոս:

**Կանխատեսում:** Մինչև տարեվերջ ՀՆԱ-ի կանխատեսված 15.6 տոկոս անկման պարագայում կունենանք սպառման անկում 5.2 տոկոսի չափով՝ հիմնականում ի հաշիվ մասնավոր հատվածի սպառման կրճատման: 2010թ, կապված տնտեսության վերականգնման և արտաքին հատվածից ներհոսող մասնավոր տրանսֆերտների ակնկալվող աճի հետ, կանխատեսված 1.2 տոկոս տնտեսական աճին համապատասխան ակնկալում ենք սպառման աճ 1.9 տոկոսի չափով:

<sup>2</sup> Սպառման հունվար-հուլիսի ցուցանիշները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են, քանի որ դրանց վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը առկա չէ:



Կապիտալ ներդրումների մասով նշենք, որ 2006-2008թթ ընթացքում կապիտալ ներդրումները միջին հաշվով աճել են 19.3 տոկոսով: Սակայն, 2009թ հունվար հուլիսին կապիտալ ներդրումները կրճատվել են 20.4 տոկոսով, հիմնականում ի հաշիվ մասնավոր ներդրումների 25.9 տոկոս իրական նվազման, որը մեծմասամբ պայմանավորված է շինարարության ճյուղի աճի տեմպերի զգալի նվազմամբ, իսկ վերջինիս վրա մեծ է եղել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը: Մինչև տարեվերջ կապիտալ ներդրումների անկումը կկազմի 31.9 տոկոս:

Արտաքին առևտրի ցուցանիշների մասով նշենք, որ 2006-2008թթ ներմուծումը միջին հաշվով աճել է 12.3 տոկոսով, իսկ արտահանումը կրճատվել է 3.6 տոկոսով, սա պայմանավորված է այդ ժամանակահատվածում փոխարժեքի աճով: 2009 թվականի հունվար-հուլիսին արտահանման իրական ծավալները կրճատվել են 15.2 տոկոսով, իսկ ներմուծումը 23.3 տոկոսով: Չնայած փոխարժեքի նվազմանը, այս ցուցանիշները պայմանավորված են արտահանվող ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի նվազմամբ և փոխարժեքի ազդեցության դրսևորման ժամանակային խզմամբ:

**Կանխատեսում:** Ներմուծման և արտահանման անկման միտումները մինչև տարեվերջ կխորանան և ըստ կանխատեսումների տարեվերջին կունենանք 25.8 տոկոս ներմուծման և 18.8 տոկոս արտահանման անկում: 2010թ. պայմանավորված համաշխարհային տնտեսության ավելի արագ վերականգմամբ, որը կարտահայտվի մեր տնտեսության նկատմամբ արտաքին պահանջարկի մեծացմամբ, կանխատեսվում է արտահանման ծավալների աճ 1.4 տոկոսի չափով և ներմուծման ծավալների նվազում 4.2 տոկոսի չափով:

Աղյուսակ 3.3.1 ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը, %


	2006	2007	2008	2009	2010
Սպառում	110.5	112.3	107.6	94.8	101.9
Ներդրում	132.2	119.7	105.9	68.1	92.2
Արտահանում	97.0	100.0	92.1	81.2	101.4
Ներմուծում	103.2	125.7	108.1	74.2	95.8
Ընդամենը ՀՆԱ	113.2	113.7	106.8	84.4	101.2

Աղյուսակ 3.3.2 Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Սպառում	108.9	104.8	99.1	93.5	92.6	86.0	82.3	81.8	82.3	94.3	95.1
Ներդրումներ	18.6	19.8	20.9	24.3	24.9	30.5	35.9	38.6	40.8	31.7	29.2
Արտահանում <sup>3</sup>	23.4	25.5	29.4	32.2	29.9	28.9	23.7	19.3	14.7	13.6	15.9
Ներմուծում <sup>4</sup>	50.5	46.1	46.6	50.1	45.5	43.3	39.7	39.0	39.8	39.5	42.4
Զուտ արտահանում	-27.2	-20.7	-17.2	-17.9	-15.6	-14.4	-16.0	-19.7	-25.1	-25.9	-26.5
Վիճ. շեղում	-0.4	-3.9	-2.7	0.1	-2.0	-2.1	-2.2	-0.7	1.98	-0.02	2.2
Ընդամենը ՀՆԱ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

<sup>3</sup> Ներառված է նաև ծառայությունները

<sup>4</sup> Ներառված է նաև ծառայությունները



### 3.4 Գնային փոփոխականներ

Տնտեսությունում գների մակարդակը բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՍԳԻ) կամ ՀՆԱ դեֆլյատորով: Իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՍԳԻ-ն ցույց է տալիս որոշակի սպառողական ապրանքների զամբյուղի գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

#### ***Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները***

Վերջին տարիների ընթացքում սպառողական գները հիմնականում կայուն են եղել՝ չգերազանցելով 4+/-1.5 % նպատակային միջակայքը: Բացառություն է կազմել 2007 թվականը, երբ սպառողական գների մակարդակը տարեվերջին կազմել է 6.6%՝ պայմանավորված արտաքին շուկերով, մասնավորապես նավթի և ցորենի միջազգային գների բարձրացմամբ:


2009 թվականի օգոստոսին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 2 % գնաճ, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների գների 3.6% նվազմամբ, ոչ պարենային ապրանքների գների 9.9% աճով և ծառայությունների սակագների 8.2% աճով:

2009 թվականի օգոստոսին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 0.4% գնանկում, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը կազմել է 3.5 %:

Կանխատեսում: 2008 թվականին ձևավորված և 2009 թվականին կանխատեսվող մակրոտնտեսական միջավայրի վերաբերյալ գնահատումները, ինչպես նաև 2009 թվականի գնաճի եռամսյակային տվյալները ցույց են տալիս, որ կանխատեսվող 12-ամսյա գնաճը կպահպանվի նպատակային միջակայքում (4+/-1.5 %) և կկազմի 5%: Ընդ որում գնաճի նման ցուցանիշի ձևավորմանն էապես նպաստել է նաև գազի, էլեկտրաէներգիայի, ջրի սակագների աճի ուղղությամբ մեկնագամյա ճշգրտումը, ինչպես նաև փոխարժեքի արժեզրկման հետևանքով ներմուծված ապրանքների գների աճի ուղղությամբ ճշգրտումը: Եթե բացառվեն առաջարկի գնաճի վերոնշյալ

գործոնները, ապա պահանջարկով պայմանավորված գնաճային միջավայրը ցածր է եղել: Ցածր գնային միջավայրը կպահպանվի մաս 2010 թվականին (12-ամսյա գնաճը կպահպանվի նպատակային միջակայքում՝ 4+/-1.5%) և կկազմի 4%:

Գծապատկեր 3.4.1 2000-2010թթ գնաճի (ՍԳԻ) դինամիկան



ՀՆԱ դեֆլյատորը 2004-2006թթ ընթացքում եղել է կայուն և կանխատեսելի միջին հաշվով կազմելով 105.7 տոկոս: 2009 թվականի տնտեսական զարգացումներով պայմանավորված դեֆլյատորի մեծությունը վերջին տարիներին արձանագրված դեֆլյատորի միջինից զգալիորեն ցածր է: Այսպես, տարվա առաջին ութ ամիսներին այն կազմել է 100.8 տոկոս:

**Կանխատեսում:** Մինչև տարեվերջ կանխատեսում ենք ՀՆԱ-ի դեֆլյատորի փոքր աճ՝ շուրջ 1.2 տոկոսի, որը հիմնականում պայմանավորված կլինի տնտեսության վերականգնմանը համապատասխան, արտադրողների գների վերականգնմամբ, իսկ արդեն 2010թ դեֆլյատորը կկազմի շուրջ 2 տոկոս:

### 3.5 Ֆինանսական շուկա

Ֆինանսական շուկաները բնութագրվում են մի շարք ցուցանիշների համախմբով: Սակայն, այս բաժնում մենք կուսումնասիրենք հիմնականում երկու ցուցանիշ՝ առաջինը ֆինանսական միջնորդության խորությունն է և երկրորդը՝ ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները:

Ֆինանսական միջնորդության խորության ցուցանիշը բնութագրում է թե ֆինանսական ինստիտուտները (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) ինչ չափով են ներգրավված տնտեսություն մեջ:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս, թե ինչքան է փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Եթե տոկոսադրույքները բարձր են ապա ռիսկայնության աստիճանը բարձր է, կամ հակառակը:

Այսինքն, ֆինանսական շուկայի միջոցով կարգավորվում է փողի նկատմամբ առաջարկը և պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար: Այդ տեսանկյունից, ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական կայունության պահպանման տեսանկյունից ունի կարևոր նշանակություն:

### ***Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները***

Վերջին տարիներին տնտեսական աճի բարձր տեմպերով պայմանավորված փողի զանգվածը շարունակական աճել է 2006 և 2007 թվականներին միջին աճերը կազմել են համապատասխանաբար 25.3% և 40.6%: Սակայն, 2008 թվականի վերջին եռամսյակում, կապված տնտեսության աճի տեմպերի դանդաղման հետ, նկատելի եղավ նաև փողի նկատմամբ պահանջարկի նվազում: Արդյունքում փողի զանգվածի միջին աճը 2008թ. տարեկան արդյունքներով կազմեց 30.1 տոկոս:

Արդեն, 2009 թվականի օգոստոսին փողի զանգվածն աճել է 0.6% նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ընդ որում դրամային ավանդների նպաստումը եղել է բացասական՝ 11.7 տոկոսային կետ, իսկ արտարժույթային ավանդներից՝ դրական 22.1 տոկոսային կետ: Արդյունքում առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2009 թվականի հուլիսի դրությամբ կազմել են 597.8 մլրդ. դրամ, որից 71.5% արտարժույթով ավանդներն են:

Փողի բազան ևս աճել է 2006 և 2007 թվականներին, որի միջին աճերը կազմել են համապատասխանաբար 37.4% և 45.5%, իսկ 2008 թվականի տարեկան արդյունքներով փողի բազայի միջին աճը կազմել է ընդամենը 37.5 տոկոս: 2009 թվականի օգոստոսին փողի բազան աճել է 1.4 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ընդ որում ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվներում ավելցուկ միջոցների և պարտադիր պահուստների նպաստումը եղել է դրական՝ 17.3 տոկոսային կետ, իսկ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի նպաստումը բացասական՝ 17 տոկոսային կետ: Կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում նվազել է 17.9 տոկոսային կետով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ կազմելով 65.8 %:

Տնտեսության դոլարայնացման մակարդակը (արտարժույթային ավանդներ/փողի զանգված), նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 21.8%, ինչը արտացոլվել է նաև տնտեսության վարկավորման ցուցանիշի վարքագծում:

*Աղյուսակ 3.5.1 Բանկային ակտիվներ/ՀՆԱ 2006 թվականից 2009 թվականի հուլիս ամիսը*

(նյութ դրամով)	2006	2007	2008	2009						
				առ 01.02.09	առ 01.03.09	առ 01.04.09	առ 01.05.09	առ 01.06.09	առ 01.07.09	առ 01.08.09
ՀՆԱ անվանական	2656.2	3149.3	3646.11	132.0	282.1	465.5	638.9	839.3	1119.3	1417.1
Վարկեր	243.6	426.2	634.5	618.5	612.1	655.1	645.8	634.5	627.2	649.2
Վարկերի կշիռ ՀՆԱ-ում % <sup>5</sup>	9.2	13.5	17.4							
Ավանդներ	306.8	413.2	465.9	467.0	487.5	546.8	526.4	528.9	553.0	597.8
Ավանդների կշիռ ՀՆԱ-ում %	11.6	13.1	12.8							

Առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2009 թվականի հուլիսին կազմել են 18.54%՝ 2008 թվականի հուլիսի 16.8% համեմատ: Նույն ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2008 թվականի հուլիսին ավանդների տոկոսադրույքը կազմել է 6.23%, ապա 2009 հուլիսին այն աճել է 2.88 տոկոսային կետով (9.11%):

*Աղյուսակ 3.5.2 Ֆինանսական շուկայի 2006-2009 թթ առանձին ամիսների միջին տոկոսադրույքները*

%	2006		2007		2008		2009						
	հուլիս	դեկտեմբեր	հուլիս	դեկտեմբեր	հուլիս	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս
Վարկեր <sup>6</sup>	16.45	17.2	17.87	16.45	16.8	16.5	19.49	18.84	19.22	18.77	18.61	18.64	18.54
Ավանդ-ներ	5.4	5.59	6.83	6.13	6.23	7.71	8.26	8.28	9.64	8.18	8.9	9.48	9.11

**Կանխատեսում:** 2009 թվականին կանխատեսվող մակրոտնտեսական միջավայրի վերաբերյալ գնահատումները, ինչպես նաև 2009 թվականի ութ ամսվա տվյալները ցույց են տալիս, որ 2009 թվականին փողի զանգվածի աճը կկազմի մոտ 13.4%: Ընդ որում, համաշխարհային տնտեսության վիճակի բարելավմանը զուգահեռ, 2010 թվականին ՀՆԱ-ի 1.2% կանխատեսված աճի դեպքում փողի զանգվածի աճը կկազմի 10.9%:

### 3.6 Վճարային հաշվեկշիռ

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեություն արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

- ◆ ընթացիկ հաշիվ (հիմնականում ցույց է տալիս արտահանման և ներմուծման հետ կապված հոսքերը)
- ◆ կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս կապիտալի ներհոսքն ու արտահոսքը)

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարա-

<sup>5</sup> Ցուցանիշների համադրելիությունը ապահովելու տեսանկյունից վարկերը պետք է դիտարկվի տարեկան ՀՆԱ-ի մեջ:

<sup>6</sup> Հաշվարկված է 16 օրից մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

բերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է:

### ***Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները***

Աղյուսակ 3.6.1-ում ներկայացված են ընթացիկ հաշվի ցուցանիշները 2006-2010 թվականների համար (տես նաև Գծապատկեր 3.6.1-ը): Վերջին տարիներին իրականացված տնտեսական և արժույթային քաղաքականության արդյունքում արտաքին հատվածի հիմնական ցուցանիշներում տեղի է ունեցել զգալի բարելավում՝ եթե 2000 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել էր ՀՆԱ-ի 14.6 տոկոսը, ապա 2007 թվականին այն հասել է 6.4 տոկոսի: Սակայն, սկսած 2008 թվականի 4-րդ եռամսյակից տնտեսությունը կրում է համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումները՝ կրճատվել են Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործունային եկամուտները, կրճատվում է նաև հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը:

2009 թվականի հունվար-հուլիսին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կրճատվել է 32.7%-ով: Հաշվետու ժամանակահատվածում նախորդ տարվա հունվար-հուլիսի համեմատ տեղի է ունեցել արտահանման և ներմուծման ծավալների կրճատում. արտահանումը նվազել է 44.5%-ով՝ կազմելով 352.2 մլն դոլար<sup>4</sup>, իսկ ներմուծումը կազմել է 1661.2 մլն դոլար՝ նվազելով 29.5 տոկոսով<sup>7</sup>: Ներմուծման նվազումը, որը տեղի է ունեցել առաջին անգամ վերջին 8 տարիների ընթացքում (2002 թվականից սկսած) հիմնականում պայմանավորված է ընթացիկ տարում բնակչության տնօրինվող եկամուտների անկմամբ, և մասամբ՝ 2009 թվականի մարտին տեղի ունեցած փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: Նշենք, որ ներմուծման անկում է արձանագրվել նաև ներդրումային բնույթ ունեցող ապրանքների գծով: Հունվար-հուլիսին ընդհանուր ներմուծման մեջ մոտ 21 տոկոս կշիռ ունեցող «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբերի նվազումը 3.4 տոկոսային կետով նպաստել է ներմուծման անկմանը:

2009 թվականի հունվար-հուլիսին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ գներով) կազմել է 1053.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 322.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 23.4%-ով և կազմելով ՀՆԱ-ի 26%-ը՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 24.3%-ի դիմաց:

2009 թվականի հունվար-հուլիսին արտահանման 44.5% նվազման ամենաբարձր՝ 17.6 տոկոսային կետը պայմանավորված է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման նվազմամբ, որը կազմել է 51%: Արտահանման նվազման 6.5 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք», 6.9 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 7.5 տոկոսային կետը՝ «Պատ-

<sup>4</sup> ՖՕԲ գներով:

<sup>7</sup> ՄԻՖ գներով:

րաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի ծավալների անկմամբ, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 40.6, 44.7 և 51.5%:

**Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների:** 2009 թվականի հունվար-հուլիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 32.2%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 30.9%-ը՝ ԵՄ երկրներին, 2008 թվականին համապատասխան ժամանակահատվածի ընթացքում նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 30.2 և 37.6 տոկոս: ԵՄ երկրների ապրանքաշրջանառության անկումը 2009 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ կազմել է 44.7 տոկոս, իսկ ԱՊՀ երկրների՝ 28.2 տոկոս: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկվել էին Գերմանիան (առևտրաշրջանառության 7.6%-ը), Չինաստանը (7.2%), ԱՄՆ-ն (5.2%), Թուրքիան (4.3%), Իրանը (3.8%), Բուլղարիան (3.7%), Իտալիան (3.2%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (22.7%), Ուկրաինան (5.2%), Վրաստանը (2.8%): Վերջիններին բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև տարվա ընթացքում կատարված ապրանքաշրջանառության 95.4%-ը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

**Փոխարժեք:** Նախորդ տարիներին ձևավորված փոխարժեքի արժևորման միտումները տարեսկզբից դադարել են: Մասնավորապես՝ եթե ընթացիկ տարվա հունվար ամսին դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը կազմել է 305.5, ապա հուլիսին այն կազմել է 365.3 դրամ՝ հունվարի համեմատ արժեզրկվելով մոտ 60 դրամով: Ըստ էության փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորված է եղել իր հավասարակշիռ մակարդակից շեղումով՝ պայմանավորված մեր տնտեսության և համաշխարհային տնտեսության միտումներով: Ընթացիկ տարվա հունվար-հուլիսին դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը կազմել է 350.51 (2008-ին՝ 306.84)՝ նախորդ տարվա հունվար-հուլիսի միջինի նկատմամբ գրանցվել է դրամի անվանական արժեքի 12.5 տոկոս արժեզրկում՝ 2008 թվականի համապատասխան ցուցանիշի գրեթե նույն չափով արժևորման դիմաց (15.4 տոկոս):

Իսկ իրական արտահայտությամբ ազգային արժույթը ոչ միայն դոլարի, այլ մի քանի, արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ (իրական արդյունավետ փոխարժեք) դեռևս արժևորվում է՝ միջին արժևորումը 2009 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կազմել է 3.1 տոկոս՝ պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորմամբ: Անվանական արդյունավետ փոխարժեքը նախորդ տարվա հունվար-հուլիսի համեմատ արժևորվել է 5.8 տոկոսով, ինչը նշանակում է, որ վերոնշյալ «զամբյուղը» կազմող մյուս երկրների արժույթների արժեզրկումը դոլարի նկատմամբ ավելի խորն է, քան ՀՀ դրամի անվանական արտահայտությամբ 12.5 % արժեզրկումը:


**Կանխատեսում:** 2009-2010 թթ կանխատեսվում է, որ Հայաստանի տնտեսության արտաքին հատվածում պահպանվում են 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումները: Առաջին հերթին դա պայմանավորված է Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության անկմամբ, ինչի արդյունքում կրճատվել են Հայաս-

տան ներհոսող տրանֆերտները և գործոնային եկամուտը, ինչպես նաև հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկի կրճատմամբ:

Աղյուսակ 3.6.1. Վճարային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ %)

	2006	2007	2008	2009	2010
Ընթացիկ հաշիվ / ՀՆԱ	-1.8	-6.4	-11.6	-13.2	-12.1
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտ. տրանսֆերտ) / ՀՆԱ	-3.1	-7.4	-12.2	-14.2	-12.6
Այդ թվում՝					
Եկամուտներ ուղղակի ներդրումներից / ՀՆԱ	-3.8	-3.6	-2.3	-2.0	-2.4
Ուղղակի ներդրումներ / ՀՆԱ	7.0	7.6	7.8	4.6	5.4

Գծապատկեր 3.6.1. Ընթացիկ հաշվի պակասուրդ / ՀՆԱ, 2000-2010 թթ



### 3.7 Պետական հատված

2006-2008 թթ պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ նկատմամբ կազմել են միջինում 20.2 տոկոսը՝ դրսևորելով շարունակական աճի միտումներ: 2009 թվականի յոթ ամիսներին պետական բյուջեի եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 25.3 տոկոսը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 23.9 տոկոսի դիմաց, իսկ հարկային եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 19.7 %-ը՝ պահպանելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակը:


2009 թվականի հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գծով արձանագրվել է 13.3 տոկոս, իսկ հարկային եկամուտների հավաքագրման առումով՝ 18.1 տոկոս, անկում, ընդ որում, անկում է գրանցվել գրեթե բոլոր հարկատեսակների և տուրքերի հավաքագրման գծով, բացառությամբ եկամտահարկի և հաստատագրված վճարների: Եթե համադրելու լինենք անվանական ՀՆԱ-ի 2009 թվականի հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արձանագրված 17.85 տոկոս անկումը, ապա պարզ կդառնա, որ հարկային եկամուտների հավաքագրման անկման ցուցանիշը գերազանցում է ՀՆԱ-ի ցուցանիշը:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով 2009 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը դրսևորել է աճի միտումներ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:



հատվածի նկատմամբ՝ 6.7 տոկոսային կետի չափով, որը գերազանցապես բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին: Կապիտալ ծախսերը/ՀՆԱ ցուցանիշը պահպանվել է նախորդ տարվա ցուցանիշի մակարդակին:

**Գծապատկեր 3.7.1. Հարկաբյուջետային ազդակը 2004-2010թթ**



Գծապատկեր 3.7.1-ը փաստում է, որ երկրում իրականացված հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում նախորդ տարում ժամանակատվածում գրանցված, ընդհանուր առմամբ չեզոք հարկաբյուջետային ազդակի<sup>8</sup> դիմաց 2009 թվականին կձևավորվի շուրջ 1.5 տոկոս ընդլայնող հարկաբյուջետային ազդակ: Ընդ որում, եկամուտների գծով կգրանցվի չեզոք ազդակ, իսկ ծախսերի գծով՝ ընդլայնող ազդակ:

**Կանխատեսում:** Տնտեսական աճին խթանելու տեսանկյունից հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա պետք է ունենա ընդլայնող ազդեցություն, ինչով էլ պայմանավորված 2009-2010 թվականների համար կմեծացվի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը: Ընդ որում՝ 2009 թվականի նշված ցուցանիշը կկազմի 6.8, իսկ 2010 թվականին՝ 5.69 տոկոս:

**3.8 Կանխատեսումների արդյունքում կատարված ենթադրություններ և ռիսկեր**

**3.8.1 Ենթադրությունները, որոնք ընկած են տնտեսական կանխատեսումների հիմքում**

- Հայաստանը, համարվելով փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, շատ արագ արձագանքեց համաշխարհային տնտեսական զարգացումներին: Դրանով էլ պայմանավորված ենթադրվում է, որ համաշխարհային տնտեսական զարգացումներին համապատասխան (ԱՄՀ-ի Համաշխարհային Տնտեսական Հեռանկարներ պարբերականով Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում (Ռուսաստան, ԱՄՆ, Եվրոպա) 2010 թվականին գրանցվելու է տնտեսությունների վերականգնում) 2010 թվականից կսկսվի տնտեսության գլոբալ վերականգնումը:
- Ենթադրվել է, որ ԱՄՆ-ի տնտեսությունում վերականգնումը փոքր-ինչ ավելի շուտ կսկսվի, քան Եվրոպայում: Միաժամանակ ԱՊՀ-երկրներում և հատկապես Ռուսաստանում՝ արձա-

<sup>8</sup> Հարկաբյուջետային ազդակի գործակիցը բնութագրում է հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը համախառն պահանջարկի վրա, որը լինում է զսպող, չեզոք և ընդլայնող:

գանքելով միջազգային հումքային ապրանքների ակնկալվող աճին, կղիտվի տնտեսական աճի համեստ տեմպեր, ինչը հիմնականում կարագան 2010թ տարվա երկրորդ կեսից (հաշվի առնելով տնտեսությունում գոյություն ունեցող լազերը):

- Գործընկեր երկրներում տնտեսական աճի տեմպերի աստիճանական վերականգնումը՝ հետևաբար և եկամուտների աճը, կուղեկցվի դեպի Հայաստան մասնավոր տրանսֆերտների վերականգմամբ, որն էլ մեր տնտեսությունում կբարձրացնի հասարակության գնողունակությունը և կընդլայնի պահանջարկը:
- Համաշխարհային շուկաներում ակնկալվում է, որ հումքային ապրանքների գներն կշարունակեն ունենալ աճի միտումներ, սակայն 2009թ համեմատությամբ աճը կլինի համեստ:
- Ներքին տնտեսությունում, 2009թ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ներքո տնտեսություն ներարկված մեծածավալ միջոցները և տնտեսական դաշտում տնտեսվարող սուբյեկտների գործունեության հեշտացման և պարզեցմանն ուղղված բազմաթիվ միջոցառումները լազային էֆֆեկտով (որոշ ժամանակ հետո) դրական ազդեցություն կունենան տնտեսական դաշտի աշխուժացման վրա: Ակնկալվում է, որ 2010թ տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ են լինելու արդյունաբերությունը և ծառայությունների ոլորտը:
- Արտաքին միջավայրի՝ մասնավորապես, Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության վերականգման տեմպերով և ներքին պահանջարկի ցածր մակարդակով պայմանավորված արտահանումը կլինի առաջանցիկ ներմուծման նկատմամբ, որով էլ կպայմանավորվի 2010 թվականի արտաքին առևտրի զարգացումները ոչ զգալի բարելավելով ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը՝ շուրջ 1 տոկոսային կետով 2009 թվականի գնահատականի համեմատ:
- Հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է լինելու առանց հարկային բեռի բարձրացման հարկային մուտքերի ավելացմանը (վարչարարության հաշվին), իսկ ծախսային մասով գերակայություն է շարունակելու մնալ սոցիալական ծախսերի մակարդակի պահպանումը:

### ***3.8.2 Կանխատեսումներում առկա ռիսկերը***

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են ուղղված լինել ինչպես տնտեսական աճի բարձրացմանը, այնպես էլ՝ անկմանը:

Միաժամանակ, Հայաստանը լինելով փոքր և բաց տնտեսություն արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին: Այդ կապակցությամբ հիմնական կան-

խատեսումների ռիսկերը մեծապես պայմանավորված կլինեն համաշխարհային տնտեսության մակրոտնտեսական փոփոխություններով:

ա) ՀՆԱ-ի աճի կանխատեսմանը նպաստող ռիսկեր.

Արտաքին միջավայր

- Եթե համաշխարհային տնտեսության վերականգնումը լինի ավելի արագ, քան կանխատեսումներում դրված ենթադրություններն են, ապա կանխատեսված աճը կլինի ավելի բարձր: Այս իրավիճակի դրսևորումը ավելի հավանական կլինի, եթե Ռուսաստանի տնտեսությունը վերականգնվի ավելի արագ տեմպերով, քան ակնկալվում է:
- Աճի ուղղությամբ հաջորդ ռիսկը կապված է միջազգային գները ակնկալվածից ավելի արագ աճի հետ, որի դրսևորման պարագայում այն մեր երկրի ՀՆԱ-ի աճի ցուցանիշը կանխատեսվածից ավել գրանցմանը կնպաստի 2 ճանապարհով՝ ուղղակի հումքի արտահանմամբ պայմանավորված արտադրության ծավալների աճի միջոցով և անուղղակի՝ Ռուսաստանից ստացվելիք մասնավոր տրանսֆերտների աճի միջոցով:

Ներքին միջավայր.

- Կանխատեսումների սցենարում ենթադրություն է դրված, որ կառավարության հակաճգնաժամային ծրագրի արդյունքը կարտահայտվի որոշակի ժամանակ անց (ժամանակային լագ՝ որոշակի ժամանակ, որն ընկած է կատարված գործողության և դրանով պայմանավորված ստացված արդյունքի միջև), սակայն եթե կառավարության ներարկած մեծածավալ վարկային միջոցները տնտեսության կողմից կլանվեն ավելի արագ, քան ակնկալվում է, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:

բ) ՀՆԱ-ի աճի կանխատեսմանը նվազեցնող ռիսկեր

Արտաքին միջավայր

- Միջազգային կառույցներում տնտեսագետներին շարունակվում է անհանգստացնել Եվրոպական տնտեսության առկա խնդիրները: Վերջինս պայմանավորված է եվրոպական արտադրողների ոչ բավարար ճկունությամբ: Մասնավորապես արտադրողները չեն կարողանում արագ ազատվել իրենց համար ոչ անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներից: Այդ իրավիճակը բացասաբար ակնդրադառնա Եվրոպական տնտեսության հետագա աշխուժացման վրա և հետաձգում է տնտեսական վերականգնումը: Արդյունքում, գլոբալ պահանջարկի աճը կլինի ավելի դանդաղ քան ակնկալվում է, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի տնտեսական աճի վրա:

**Հավելված. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ**

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010
	փաստ.	փաստ.	փաստ.	ծրագ.	կանխ.
<b>Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ</b>	<b>2656.2</b>	<b>3149.4</b>	<b>3646.1</b>	<b>3116.2</b>	<b>3214.6</b>
Իրական ՀՆԱ ինդեքս	113.2	113.7	106.8	84.4	101.2
ՀՆԱ դեֆլյատոր	104.6	104.1	108.4	101.2	102.0
Սպառողական գների ինդեքս (ժամկետի վերջ)	105.2	106.6	105.2	105.0	104.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ) %	5.2	6.6	5.2	5.0	4.0
Գնաճ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) %	2.9	4.4	9.0	3.0	2.8
<b>ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների՝</b>					
ՀՆԱ	13.2	13.7	6.8	-15.6	1.2
Արդյունաբերություն այդ թվում՝	-2.5	2.8	2.4	-7.4	3.1
մետալուրգիա (հանքագործական և մետաղագործական արդյունաբերություն) <sup>9</sup>	1.2	1.5	-9.3	4.0	3.0
մշակող արդյունաբերություն, առանց մետաղագործական արդյունաբերության <sup>13</sup>			7.4	-13.0	4.0
էլեկտրաէներգիա			8.0	-8.0	1.5
Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն	0.5	10.4	1.4	-1.0	2.0
Շինարարություն	37.7	18.2	7.2	-46.6	-3.9
այդ թվում՝					
Բնակարանային շինարարություն <sup>13</sup>			7.2	-62.5	-14.0
Այլ շինարարություն <sup>13</sup>			7.2	-30.0	1.0
Ծառայություններ	16.0	12.5	8.5	1.0	2.0
Զուտ հարկեր	14.9	35.9	16.7	-20.0	2.0
<b>ՀՆԱ ծախսային կոմպոնենտների իրական աճերը</b>					
Վերջնական սպառում	10.5	12.3	7.6	-5.2	1.9
Մասնավոր	9.2	13.2	6.4	-6.5	2.0
Պետական	19.8	5.2	15.4	5.7	0.8
Կապիտալի համախառն կուտակում	32.2	19.7	5.9	-31.9	-7.8
Մասնավոր	33.7	14.7	6.4	-39.0	-2.0
Պետական	8.8	57.2	27.5	-3.5	-22.3
Ապրանքների և ծառայությունների արտահանում	-3.0	0.0	-7.9	-18.8	1.4
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	3.2	25.7	8.1	-25.8	-4.2
<b>Արտաքին հատված</b>					
<i>Մլն. ԱՄՆ դոլար</i>					
Ապրանքների և ծառայությունների արտահանում	1510.2	1776.7	1757.0	1157.4	1285.1
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-2536.4	-3589.5	-4747.6	-3371.9	-3407.7
Ապրանքների արտահանում	1025.4	1196.6	1112.0	667.2	760.6
Ապրանքների ներմուծում	-1921.3	-2796.9	-3775.5	-2642.9	-2664.0
Ապրանքների արտահանման աճ, %	2.0	16.7	-7.1	-40.0	14.0
Ապրանքների ներմուծման աճ, %	20.6	45.6	35.0	-30.0	0.8
Ընթացիկ հաշիվ	-117.1	-589.3	-1381.8	-1129.9	-973.6
Կապիտալի և ֆինանսական հաշվի	520.6	1142.5	1147.0	1341.8	1063.0
Արտաքին պարտք	1205.6	1448.9	1577.1	2504.1	2909.5
<b>ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս</b>					
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-16.1	-19.7	-25.1	-25.9	-26.4
Ապրանքների և ծառայությունների արտահանում	23.7	19.3	14.7	13.6	16.0
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	39.7	39.0	39.8	39.5	42.4

<sup>9</sup> ԳՖ ֆինանսների նախարարության գնահատական

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010
	փաստ.	փաստ.	փաստ.	ծրագ.	կանխ.
Առևտրային հաշիվ	-14.0	-17.4	-22.4	-23.1	-23.7
Ընթացիկ հաշիվ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)	-1.8	-6.4	-11.6	-13.2	-12.1
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների)	-3.1	-7.4	-12.2	-14.2	-12.6
Արտաքին պարտք	18.9	15.7	13.2	29.3	36.2
Ներմուծման ծածկույթը (ամիսներով)	5.1	5.5	3.6	7.8	8.0
<b>Դրամավարկային հատված<sup>10</sup></b>					
Փողի զանգվածի աճ % (M2X միջին)	25.3	40.6	30.1	7.9	12.1
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն (ՀՆԱ/M2X միջին)	5.49	4.55	5.01	4.1	3.8
Փողի բազմարկիչ (M2X)	1.71	1.62	1.66	1.6	1.6
Դրամային զանգվածի աճ % (M2 միջին)	43.5	67.3	36.7	-8.9	-1.4
Դրամային զանգվածի շրջապտույտի արագություն (ՀՆԱ/M2 միջին)	7.79	5.61	6.39	6.2	6.5
Դրամային բազմարկիչ (M2)	1.32	1.45	1.53	1.0	0.9
Փողի բազա % (միջին)	37.4	45.5	37.5	9.4	10.3

<sup>10</sup> 2006-2008 թվականների համար դրամավարկային հատվածի ցուցանիշների միջինները հաշվարկված են եռամսյակային տվյալներով, իսկ 2009 և 2010 թվականների համար դրամավարկային հատվածի ցուցանիշները կանխատեսվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և միջինները հաշվարկվել են տարեկան տեղեկատվության հիման վրա: